ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆԻ COVID-19-ի ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Թարմացված՝ 26 մայիսի, 2021)

Գործելով հիմնականում Հայաստանի գյուղերում և Արցախում՝ «Դասավանդի՛ր, Հայաստանը»-ը /այսուհետ՝ Հիմնադրամ/ հավատացած է, որ կարևոր է սահմանել COVID-19 ուղեցույցներ /այսուհետ՝ Ուղեցույցներ/՝ պաշտպանելու համար այն համայնքների բարեկեցությունը, որտեղ Հիմնադրամն աշխատում է: Ուղեցույցները բաժանված են երկու խմբի. 1) Ուղեցույցներ, որոնք պարտադիր են բոլոր աշխատակիցների, Ուսուցիչ-առաջնորդների և Շրջանավարտ-դեսպանների համար, որոնք մասնակցում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի գործունեությանը. և 2) Ուղեցույց, որին համաձայնությունը կամավոր է և խրախուսվում է, բայց թողնված է անհատի որոշմանը:

ՈՉ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Աշխատակազմի անդամները և Ուսուցիչ-առաջնորդները, որոնք լիարժեք պատվաստվել են, պետք է ուղարկեն իրենց պատվաստման քարտի նկարը Մարիա Հովհաննիսյանին maria@teachforarmenia.org էլ. փոստով: ԴՀ շրջանավարտ-դեսպանները, որոնք մասնակցում են ԴՀ-ի միջոցառումներին և պատվաստվել են, խնդրում ենք ներկայացնել պատվաստման քարտի նկարը (կամ բացասական թեստի ապացույցը).
- Նախքան Հիմնադրամի գործընկեր համայնքներից մեկն այցելելը կամ տեղափոխվելը՝ (աշխատանքային նպատակներով), անձինք պետք է ունենան կամ՝ 1) վերջին 12 ամիսների ընթացքում պատվաստում ստանալու ապացույց կամ՝ 2) COVID-19 թեստի բացասական արդյունք կամ 3) Հակամարմինների թեստի ապացույց, որը ցույց է տալիս, որ վերջին 6 ամիսների ընթացքում ապաքինվել եք COVID-19-ից:
- Նախքան ԴՀ համագործակից համայնքներ այցելելը բոլոր անհատները պետք է կրեն դիմակ 14 օր մինչ իրենց լիովին պատվաստվելը: Չպատվաստված անձինք, որոնք ունեն բացասական թեստ կամ նոր են ապաքինվել Քովիդ19-ից, ևս պետք է կրեն դիմակ այդ ընթացքում:
- Որոշ պարտադիր, ինչպես նաև գիշերակացով միջոցառումների համար, ինչպիսին են, օրինակ, Ուսուցիչ-առաջնորդների Ակադեմիան և աշխատակիցների գործնական հավաքները, կարող է պահանջվել թեստավորում՝ պատվաստում չստացած անձանց համար: Մարդկային ռեսուրսների թիմն այդ մասին Ձեզ կտեղեկացնի նախապես:
- Բոլոր անհատները պետք է հետևեն ՀՀ կառավարության կողմից տրված հրահանգներին (օրինակ՝ եթե Հայաստանի ԿԳՄՄՆ-ն պահանջում է, որ ուսուցիչները պետք է դիմակ կրեն, բոլոր Ուսուցիչ-առաջնորդները պետք է ենթարկվեն այդ որոշմանը և դրա չպահպանելու հետ կապված բոլոր հետևանքների ռիսկը կրում է տվյալ անձը):
- Աշխատանքային ժամերին մեր գործընկեր դպրոցներում լուսանկարվելիս կամ նկարահանվելիս անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության կողմից սահմանված դիմակ կրելու կանոնները (Վերոբերյալ պարտադիր 14 օրվանից հետո):

- Հայաստանում Հիմնադրամի գրասենյակներում աշխատելիս պետք է հավատարիմ մնալ Հայաստանի գրասենյակի COVID-19 ուղեցույցին:

ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ

- Արցախում, մասնակիցները և այլ ներգրավված անձիք պետք է վստահ լինեն, որ հետևում են տեղական ինքնակառավարման մարմինների և տարածաշրջանային ղեկավարի կողմից սահմանված կանոններին:
- Ախտանիշների դեպքում (օրինակ՝ հազ, ջերմություն, մարմնի ցավեր), հարկ կլինի խուսափել գրասենյակ այցելելուց և Հիմնադրամի որևէ այլ աշխատակցի, Ուսուցիչ-առաջնորդների կամ Շրջանավարտ-դեսպանների հետ շփվելուց հաջորդող 14 օրերի ընթացքում կամ մինչև թեստի բացասական արդյունք ներկայացնելը:
- Եթե Հիմնադրամի աշխատակազմի անդամ եք և COVID-19-ի թեստը դրական է, ապա նույն օրը հարկ կլինի տեղեկացնել Հիմնադրամի մարդկային ռեսուրսների թիմին և անմիջական ղեկավարին, ինչպես նաև հետագա 14 օրերի ընթացքում զերծ մնալ գրասենյակ այցելելուց կամ որևէ անձնական հանդիպումներից այնքան ժամանակ, մինչև թեստի արդյունքները բացասական չլինեն: Եթե Ուսուցիչ-առաջնորդ եք, հարկ կլինի տեղեկացնել առաջնորդության զարգացման ծրագրի ղեկավարին, գործատուին և զերծ մնալ դպրոց հաճախելուց:

*Լիարժեք պատվաստված նշանակում է պատվաստման բոլոր՝ 2 չափաբաժինները ստացած

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- Նախընտրելի է խմբային հանդիպումների ժամանակ միշտ կրել դիմակ:
- Մարդկանց հետ շփվելիս նպատակահարմար է պահպանել սոցիալական հեռավորություն (խուսափել գրկելուց, համբուրվելուց և ձեռքսեղմումից՝ պահպանելով 1 մետր կամ ավելի հեռավորություն):
- Խուսափել 20-ից ավելի մարդկանց խմբով հավաքվելուց:
- Խմբով հավաքվելիս, նախքան հանդիպումը, նպատակահարմար է, որ բոլոր մասնակիցներն էլ COVID-19-ի թեստ հանձնեն:
- Խմբային հավաքույթները պետք է անցկացվեն լավ օդափոխված վայրերում. նախընտրելի են բացօթյա տարածքները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անհատներն արդեն պատվաստվել են:
- Անհատական հանդիպումներն ու միջոցառումները պետք է սահմանափակվեն հատուկ առիթներով: Հնարավորության դեպքում հանդիպումները նախընտրելի է կազմակերպել առցանց ձևաչափով:

Ստորագրելով սույն փաստաթուղթը՝ ընդունում եմ, որ հասկանում եմ «Դասավանդի՛ր, Հայաստանը»-ի COVID-19-ի ուղեցույցները: Հասկանում եմ, որ նշված ոչ բանակցային կարգերը խախտելով, կարող եմ ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Գիտակցում եմ նաև, որ որպես անհատ իմ պարտականությունն է պաշտպանել այն համայնքների առողջությունը, որտեղ աշխատում եմ: Անտեսելով ընդհանուր ուղեցույցը՝ գիտակցում եմ և ամբողջությամբ կրում եմ այլ անձանց վարակման ռիսկը:

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ՝ _____

ԱՄՍԱԹԻՎ՝ _____